Քաղաքացիական հասարակության հարգելի ներկայացուցիչներ,

2021 թվականից Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ մեկնարկել է «Աղքատության նվազեցում համայնքներում. կիրառական մոտեցումներ» եռամյա ծրագիրը, որն իրականացվում է Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան հիմնադրամի, Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնի, Եվրասիա համագործակցություն հիմնադրամի և Հրանտ Մաթևոսյան հիմնադրամի կողմից՝ համագործակցաբար:

Ծրագրում կարևորվում է քաղաքացիական հասարակության դերը՝ համայնքներում աղքատության վերացմանն ուղղված քաղաքականությունների մշակման և իրականացման գործում: Մասնավորապես, Ծրագիրը նախատեսում է ակտիվացնել անհավասարության և աղքատության վերաբերյալ հանրային քննարկումները և իրականացնել աղքատության կրճատմանն ուղղված սոցիալական նախաձեռնություններ:

Ծրագրի շրջանակներում կարևորվում է քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) կարողությունների բարելավումը մի շարք ուղղություններով, մասնավորապես՝ բյուջետային գրագիտության բարձրացում, հանրային ծրագրերի մշակման գործընթացներում մասնակցության բարելավում, ծրագրերի մոնիթորինգ և գնահատում:

Հրավերին կարող են արձագանքել քաղաքացիական հասարակության բոլոր հետաքրքրված կազմակերպությունները, որոնք կիսում են սույն ծրագրային նպատակները, ունեն որոշակի փորձ և համապատասխան կարողություններ համագործակցելու 2023 թվականի ընթացքում՝ նպաստելու Հայաստանում և իրենց համայնքներում աղքատամետ բյուջետային ծրագրերի մշակմանը, մասնակցելու բյուջետային գործընթացներին:

Դասընթացը նախատեսված է Լոռու, Տավուշի և Շիրակի մարզերում, ինչպես նաև հանրապետական մակարդակով գործունեություն իրականացնող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համար: Դասընթացին մասնակցելու համար անհրաժեշտ է մինչև **2023 թվականի փետրվարի 28-ը** լրացնել առցանց դիմումի ձևը հետևյալ հղմամբ՝ https://forms.gle/WLubQzKA8UmxcCcc9: Ընտրված մասնակիցները լրացուցիչ կտեղեկացվեն դասընթացի անցկացման վայրի և այլ մանրամասների վերաբերյալ:

Լրացուցիչ տեղեկությունների և հարցերի համար կարող եք դիմել Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն՝ Լիլիթ Հակոբյանին (հեռախոս՝ 096 22 38 03):

Հարգանքով՝

ԾՐԱԳՐԻ ԹԻՄ

«Աղքատության նվազեցում համայնքներում. կիրառական մոտեցումներ» ծրագիր